ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<02>> մայիսի 2021թ. ՆՄՈ/103-2021

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի 2021 թվականի մարտի 23-ի ՆՄԾ/6593 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայթաղ համայնքում կառուցված ներտնտեսային ցանցի աշխատանքների թերությունները բացահայտելու, հաշվառելու, վերացնելու և հետագա շահագործումն ապահովելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ (Ա. Մեխակյան) սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության տեխնիկական տնօրինության շինարարական աշխատանքների համակարգման բաժնի պետ Գ. Այվազյանին, Արմավիրի տեղամասի համակարգող պետ Ա. Խաչատրյանին, <<Էջմիածին>> ենթատեղամասի վթարային խմբի ղեկավար Խ. Սողոմոնյանին, Հայթաղ համայնքի ղեկավար Մ. Մուրադյանին և համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Գրիգորյանին (համաձայնությամբ:)
3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ (Ա. Մեխակյան) սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 20 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետին (Ա. Համբարձումյան)՝ սահմանված կարգով տրամադրել հերթապահ մեքենա՝ աշխատանքային խմբի աշխատանքները կազմակերպելու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

02.04.2021

X

VERIFIED OCSP 02.04.2021 12:44:54 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2021 թվականի Փետրվարի 02-ի
N ՄՈ/103-2021 որոշման

Աշխատանքային խմբի կազմ

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Ա. Մեխակյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ

անդամներ՝

Ա. Հովհաննիսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ.

Վ. Մկրտչյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ.

Գ. Հովհաննիսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ-շինարարի պաշտոնակատար.

Ռ. Սահակյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ավագ ճարտարագետ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ***Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Недействительная подпись

VERIFIED OCSP 02.04.2021 12:09:37 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023